ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 150

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ ս/թ սեպտեմբերի 24-ի N 01 /08/6123-2021 գրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 15-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

   ա. որոշմամբ հաստատված կանոնակարգի 28-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1 ենթակետով՝ «9.1) ապահովել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն որամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և/կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի (ծառայության) ներկայանալիս, ինչպես նաև պատասխանատու է սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարման, դիտարկումների իրականացման համար:»,

բ. 32-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1 ենթակետով՝ «9.1) աշխատանքի (ծառայության) ներկայանալիս սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման պատասխանատու նշանակված անձին ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը, ընդ որում՝ մինչև նշված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի (ծառայության) ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:»

գ. 50-րդ կետը «բացատրություն» բառից հետո լրացնել «, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և/կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձը ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին պարտավոր է գրավոր բացատրություն (զեկուցագիր) ներկայացնել հատուկ՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետում:» նախադասությամբ,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 50.1 կետով՝ «50.1. Համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլտված անձի վերաբերյալ տվյալները պատասխանատու նշանակված անձի կողմից մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին կամ խախտում թույլ տված անձի անմիջական ղեկավարին (վերադասին), որն էլ պարտավոր է խախտման մասին մեկօրյա (աշխատանքային) ժամկետում տեղեկացնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող անձին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 151

ՔԱՂԱՔԱՑԻ ՊԱՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂՈՒ ՁԱԽԱԿՈՂՄՅԱՆ 14 ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 16,06ՔՄ ԽԱՆՈՒԹԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Պավել Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 0128491/ Ջերմուկի խճուղու 14 շենքի 1-ին հարկում գտնվող հասարակական նշանակության խանութը հասցեավորել որպես Վայք համայնք, քաղաք Վայք, Ջերմուկի խճուղի, շենք 14, խանութ թիվ 55:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 152

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՈՐԻ ԿԱԶՄԻՑ ԱՃՈՒՐԴԱՎԱՐ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի 24-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողերը օտարելու նպատակով ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ կազմով
   - հանձնաժողովի նախագահ-Գևորգ Մարգարյան-համայնքի ղեկավարի տեղակալ
   - հանձնաժողովի անդամներ-Գագիկ Մուշկամբարյան-աշխատակազմի քարտուղար
   - հանձնաժողովի անդամ-Ռոման Մկրտչյան-աշխատակազմի գլխավոր մասնագետ
   - հանձնաժողովի անդամ-Նատալյա Հովհաննիսյան-աշխատակազմի ֆին. բաժնի պետ
   - հանձնաժողովի անդամ-Համլետ Գեղամյան-ավագանու անդամ

2. Հանձնաժողովի կազմից աճուրդավար նշանակել Գևորգ Մարգարյանին և արձանագրող նշանակել Գագիկ Մուշկամբարյանին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 153

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԵՂԻՇԵ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՁԱԽԱԿՈՂՄՅԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ՝ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հանգուցյալ Եղիշե Միքայելի Մաթևոսյանին պատկանած Վայք քաղաքի Մյասնիկյան փողոցի ձախակողմյան հատվածում գտնվող բնակելի տունը՝ 0,12 հա տնամերձ հողամասով հասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Մյասնիկյան փողոց, բնակելի տուն թիվ 19:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 154

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և այաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի <<**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ) ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ) ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N 470-Ն, 1994 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 462 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 1101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>** N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019թ. մայիսի 16-ի թիվ 37 որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան փողոց 87 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող Բնակելի տունը 83,6 քմ ընդհանուր մակերեսով ՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,02179 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատմության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Հրանտ Գորկիի Գրիգորյանին՝ շինության համար 356637,6/83,6Х4266/ դրամ և հողատարածքի համար 523878,3/279Х1877,7/ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առքուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 155

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԽԱԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄՀԵՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԻ ՏԱՂԱՎԱՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վայքի քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի <<ա>> ենթակետերով , ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019թ. սեպտեմբերի 10-ի թիվ 52 որոշումը/կատարվել է փոփոխություն 2020թ. հունվարի 31-ի թիվ 2 որոշմամբ/

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքի բնակիչ Մեխակ Մերուժանի Միերյանին Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 53/73 հասցեում կառուցապատման իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրել 18,0 քմ հողատարածք՝ ժամանակավոր առևտրի տաղավար տեղադրելու նպատակով:
2. Քաղ. Մեխակ Մերուժանի Միերյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:
3. Հողատարածքի վարձավճար սահմանել 4000 դրամ:
4. Շինարարությունը սկսել քաղաքաշինական փաստաթղթերի առկայության դեպքում:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 156

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և այաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի <<**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ) ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ) ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N 470-Ն, 1994 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 462 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 1101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>** N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019թ. մայիսի 16-ի թիվ 37 որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան փողոց 4/5 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող Ավտոտնակը 19,9 քմ ընդհանուր մակերեսով ՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,00222 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատմության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Իսկուհի Մինասյանին՝ շինության համար 28297,8/19,9Х1422/ դրամ և հողատարածքի համար 41684,94/22,2Х1877,7/ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առքուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 157

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵԴԵԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՆԱՐԻՆԵ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԻՄՈՆՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-135-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածին 37 հոդվածների, Հայասատանի Հարապետության կառավարության 2016թ.-ի հունիսի 2-իթիվ 631-Ն որոշման դրույթներին համապատասխան:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հիմք ընդունելով Վայք համայքի Ձեդեա բնակավարի բնակիչներ Սամվել Սիմոնյանի և Պարզիկ Ալեքսանյանի դիմումները և Վայք համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 01/10/2021 թվականի արձանագրությունն ու եզրակացությունը, Վայք համայքի Ձեդեա բնակավայրում բնակվող անչափահասներ Նարինե, ծնված 08.08.2014թև Սամվել ծնված 07.03.2017թԳուրգենի Սիմոնյանների նկատմամբ սահմանել խնամակալություն, հաշվի առնելով նրանց՝ առանց ծնողական խնամքի մնալու փաստը:
2. Նարինե և Սամվել Գուրգենի Սիմոնյանների խնամակալ նշանակել հայրական կողմի պապին՝ Սամվել Սերյոժի Սիմոնյանին և տատին՝ Պարզիկ Սուրենի Ալեքսանյանին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Սամվել Սիմոնյանին և Պարզիկ Ալեքսանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 158

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԹԱՐՈ ԱՎԵՏՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 181-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2016 թվականի հոկտեմբերի 8-ից ստանձնած լինելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավարի պաշտոնը, Համայնքի ղեկավարի պաշտոնավարման՝ օրենսդրությամբ սահմանված 5 տարի ժամկետը լրանալու կապակցությամբ, 2021 թվականի հոկտեմբերի 8-ից դադարեցնել Համայնքի ղեկավարի իմ լիազորությունները և ազատել Համայնքի ղեկավարի զբաղեցրած պաշտոնը:
2. Վայքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և այլ անհրաժեշտ գործառույթներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ